ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

С. С. АРЕВШАТЯН. К истории философских школ средневековой Армении (XIV в.). Изд-во АН Арм. ССР, 1980, 79 с.

Հայ փիլիսոփայության պատմության հետազոտողները գրեթե չեն դիմել պատմահամեմատական մեթոդին, էլ չենք խոսում պատմատիպաբանական մեթոդի մասին։ Սակայն հենց այս մեթոդների շնորհիվ կարելի է ըստ արժանվույն գնահատել այս կամ այն ժողովրդի անցյալի կուլտուրական արժեքները, բնութագրել այդ ժողովուրդների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ։ Այդ իմաստով գրախոսվող գիրքը ձեռք է բերում կարևոր նշանակություն։

Տվյալ հետազոտությունն ուշագրավ է երկու առումով։ Նախ՝ տրվում է միջնադարյան Հայաստանի (XIV դարի) փիլիսոփայական դրպրոցների կազմավորման նախադրյալների և ընթացքի բնութագիրը։ Ապա՝ առաջ են քաշվում և գիտականորեն հիմնավորվում հետազոտության մեթոդաբանական սկզբունքները, որոնք հեղինակին հնարավորություն են ընձեռում նոր ձևով լուսաբանելու և գնահատելու միջնադարյան հայ փիլիսոփայության ամենահետաքրքիր էջերից մեկը։ Խոսքը վերաբերում է Արևմուտքի «առաջին» ծավալուն գաղափարական էքսպանսիային, կաթոլիկ միսիոներների գիտափիլիսոփայական և գրական գործունեությանը, նշված ժամանակաշրջանում Հայաստանի հոգևոր մշակույթի մեջ նրանց տեսական ժառանգության դերի ու նշանակության հարցերին։

Անցյալում հետազոտողները հայ եկեղեցու ինքնուրույնության համար Արևմուտքի գաղափարական ներթափանցման դեմ մղված պայքարում ընդգծում էին միայն գաղափարատեսական և քաղաքական-գաղափարախոսական մոմենտները։ Նման մոտեցման տրամաբանական հետևանքը եղել է այն, որ պապական միսիոներների և նրանց հայ հետևորդների կողմից ստեղծված գիտափիլիսոփայական ու թարգմանչական գրականության գնահատականի նրկատմամբ ձևավորվել է խիստ բացասական դիրքորոշում, լիովին ժխտվել կամ անտեսվել է այդ գրականության դիտամշակութային նշանակությունը միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման գործում։

Աշխատությունը կազմված է ներածությունից և երեք գլուխներից։ Ներածության մեջ տրված է Գլաձորի և Տաթևի դպրոցների գործունեության համառոտ բնութագիրը՝ առաջավոր փիլիսոփայական գաղափարների զարգացման լուսաբանման և կաթոլիկ էմիսարների ու հայ ունիթորների կողմից Հայաստանում տարածվող կաթոլիկական գաղափարախոսության տեսական հերքման տեսանկյունից։

Ս. Արևշատյանը, ելնելով պատմափիլիսոփայական հետազոտության մարքսիստական մեթոդաբանությունից, առաջ է քաշում սոցիալ-մշակութային երևույթների ուսումնասիրությանը տարբերակված մոտեցում ցուցաբերելու գաղափարը, որի համաձայն որքանով արդարացված չէ գիտական գործունեությունը իր քաղաքական-գաղափարական կոնտեքստից լիովին անջատելը, նույնքանով անհիմն է դրանց նույնացումը։ Այլ կերպ ասած, կաթոլիկ միսիոներների քաղաքական և գաղափարախոսական գործունեությունը, որը խիստ բացասական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմական բախտորոշման համար, պետք է որոշակիորեն սահմանազատել նրանց գիտական գործունեությունից, չնայած որ վերջինս կոչված էր կատարելու որոշակի գաղափարախոսական ֆունկցիա՝ տեսականորեն ապացուցել կաթոլիկական դավանանքի առավելությունները։ Այդ իմաստով հաշվի չառնելով ունիթորական շարժման գաղափարախոսների սուբյեկտիվ նպատակներն ու ձգտումները, միաժամանակ պետք է նկատել, որ նրանք օբյեկտիվորեն դրական ազդեցություն են ունեցել միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման վրա, այն հարստացրել են մի շարք հետաքրքիր գաղափարներով ու դրույթներով, նպաստել են Արևմտյան Եվրոպայի հոգևոր մշակույթի հետ ուղղակի կապեր հաստատելուն, կապեր, որոնք հնարավորություն են տվել հաղորդակցվելու արևմտաեվրոպական փիլիսոփայական մտքի նվաճումների հետ։

Ս. Արևշատյանը, ինչպես ներածության, այնպես էլ հետագա շարադրանքի մեջ ցույց է տալիս, որ արդեն «հակակաթոլիկական կուսակցության» ներկայացուցիչները (Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի) Արևմուտքի հավակնությունների դեմ մղվող անողոք ու անհաշտելի պայքարի պրոցեսում «կարողացան կաթոլիկական քարոզիչների գիտական-գրական, լուսավորական գործունեու-

թյան օգտակար կողմը տարրերել հայ եկեղեցու համար վտանգավոր պապականության մտադրություններից» (էջ 7)։ Այս կարևոր փաստը անուշադրության է մատնվել հայ փիլիսոփայության պատմության հետազոտողների կողմից։

Կաթոլիկ միսիոներների գործունեության հիմնական խնդիրներից մեկը եղել է կաթոլիկական դավանանքի սկզբունքներն ու դոգմաները հայ ժողովրդի մեջ արմատավորելը։ Սակայն պապական կուրիայի նկրտումների հաջող իրականացման համար նրա էմիսարներին անհրաժեշտ էր ոչ միայն մոտիկից ծանոթանալ սոցիալական իրականությանը, այլև խորամուխ լինել հայկական ազգային հոգերանության, մշակութային ավանդույթների, ժողովրդի կենսական հոգևոր պահանջմունքների մեջ։ Այդ իսկ պատճառով, «կաթոլիկ հեղինակների գրչի տակից գուրս եկած երկերը չի կարելի կարել նշված ժամանակաշրջանի հայ հոգևոր մշակույթից», քանզի դրանք, որոշ իմաստով, հայկական մշակութային միջավայրի ծնունդն էին և գրվել են նրա համար (էջ 11)։ Հենց այս, գիտամշակութային տեսակետից անվիճելի, փաստի գիտակցմամբ է պայմանավորված հեղինակի հետազոտության թեմայի ընտրությունը, մի ընտրություն, որը վկայում է այն մասին, որ նշված թեմատիկան իր արժանի տեղը պետք է գրավի հայ միջնադարյան փիլիսոփայական մշակույթի պանթեոնում։

Գրախոսվող գրքի առաջին գլուխը նվիրված է XIV դարի Արևելյան Հայաստանի կաթոլիկական կենտրոնների, մասնավորապես Ծործորի և Քռնայի դպրոցների գիտական-գրական գործունեությանը, նրանց մշակութային և գաղափարական կյանքում նրանց ունեցած դերի վերլուծությունը։ Հեղինակը թվարկում է լատին և հայ ունիթոր հեղինակների հիմնական աշխատությունները, տալիս է նաև լատիներենից կատարված թարգմանական գրականության ցանկը։ Նա բացահայտում և արժեքավորում է դրանց նշանակությունը ազգային հոգևոր մշակույթի հետագա զարգացման գործում։ Մասնավորապես ցույց է տրվում, որ Բարթուղիմեոս Բոլոնացու «Դիալեկտիկան» տրամաբանության ուսումնական ձեռնարկ է ծառայել ոչ միայն ժամանակի, այլև հետագա դարերի հայ բարձրագույն դպրոցների համար (էջ 24), որ նշված աշխատությունը հայերին ծանոթացրել է անցյալի տրամաբանական տեսությունների լատինական մեկնաբանություններին և ժամանակի արևմտաեվրոպական տրամաբանական մտքին։ Այսպես, օրինակ, Բարթուղիմեոսի «Դիալեկտիկան» հայ տրամաբանական գրականության մեջ առաջին անգամ մտցնում է կատեգորիկ սիլլոգիզմների մոդուսները մտապահելու եղանակները (էջ 25)։ Խոսելով Բարթուղիմեոս Բոլոնացու աշխատությունների նշանակության մասին, հեղինակը ձգտում է, սակայն, հիմնավորել այդ՝ հակիրճ և սպառիչ բնութագիր տալով այն պրոցեսներին, որոնք տեղի են ունեցել քննարկվող ժամանակաշրջանում ժողովուրդների ինտելեկտուալ-հոգեվոր և քաղաքական կյանքում։ Հենց սրանով է հեղինակը բացատրում այն փաստը, որ մինչև XIV դարը հայ թարգմանչական գրականության մեջ գերիշխում են հունարենից, իսկ XIV դարից սկսած՝ առավելապես լատիներենից կատարվող թարգմանությունները։

Ամփոփելով ունիթորների գիտական-գրական և գաղափարական գործունեությունը, Ս. Արևշատյանը նշում է. «Եթե հասարակական-քաղաքական տեսակետից լատինական թարգմանական գրականությունը ծառայել է կաթոլիկ եկեղեցու շահերին և բացասական դեր է խաղացել՝ թուլացնելով հայ ժողովրդի ազգային-հոգևոր միասնությունը, ապա կուլտուր-մտավոր առումով այն հիմնականում ունեցել է դրական նշանակություն՝ միջնադարյան հայ գրքագետներին ծանոթացնելով արևմտաեվրոպական մտքի հոսանքներին, փիլիսոփայական այն անողոք վեճերին ու պայքարին, որոնց մեջ ներգրավված էր կաթոլիկական Արևմուտքը» (էջ 27)։ Ս. Արևշատյանը դիպուկ է բնութագրում այդ պրոցեսը՝ անվանելով V—VI դդ. հետո երկրորդ «խոշոր ճեղքում դեպի համամարդկային կուլտուրայի հոգևոր նվաճումները» (էջ 29)։

Կարևոր է նշել նաև, որ հեղինակը բուն իսկ ունիթորական շարժման մեջ առանձնացնում է երկու հոսանք. մեկը՝ ներկայացված պապական միսիոներներով (Բարթուղիմեոս Բոլոնացի, Պետրոս Արագոնացի), երկրորդը՝ հայ ունիթորներով (Հովհաննես Ծործորեցի, Հովհաննես և Հակոբ Քռնեցի)։ Հեղինակը ցույց է տալիս, որ հայ ունիթորները, խզելով կապերը նախահայրերի հավատի հետ և անցնելով կաթոլիկների բանակը, միաժամանակ «շարունակում էին մնալ զուտ հայ մշակութային գործիչներ», ի տարբերություն իրենց «նոր եվրոպական ուսուցիչների» (էջ 28)։

Գրքի երկրորդ գլխում քննարկվում են Բարթուղիմեոս Բոլոնացու փիլիսոփայական հայացքները և նրանց ազդեցությունը Տաթևի դպրոցի ներկայացուցիչների վրա։ Ինչպես վերը նշեցինք, կաթոլիկ միսիոներների և նրանց հայ հետևորդների փիլիսոփայական հայացքները հատուկ պատմափիլիսոփայական վերլուծության առարկա չեն դարձել։ Ս. Արևշատյանը գիտակցաբար ընտրում է այն պրոբլեմները, որոնց

վերլուծությունը ապացուցում է Բարթուղիմեոսի գաղափարների անմիջական ներգործությունը Տաթևի դպրոցի գիտափիլիսոփայական ժառանգության վրա։ Այսպես, օրինակ, հեղինակը ցույց է տալիս, որ ժամանակի սկզբունքային հարցերից մեկի՝ Աստծո և մատերիայի փոխհարաբերության հարցը քննարկելիս Հովհան Որոտնեցին, Գր. Տաթևացին և Մաթևոս Ջուղայեցին հետևել են Բարթուղիմեոս Բոլոնացու հայացքներին։ Սակայն փիլիսոփայության հիմնական հարցի (միջնադարյան տարբերակով) միատիպ կրոնադեալիստական լուծումը Ս. Արևշատյանը իրավացիորեն բացատրում է ոչ միայն Տաթևի դպրոցի ներկայացուցիչների վրա լատին մտածողների ունեցած ազդեցությամբ, այլև նրանով, որ թե՛ Տաթևի դպրոցի ներկայացուցիչները և թե՛ լատին մտածողները հավասարապես օգտվել են նույն ընդհանուր աղբյուրներից՝ Սուրբ գրքերից և Արիստոտելի քրիստոնեացված փիլիսոփայությունից։ Նույնը կարելի է տեսնել նաև հավատի ու գիտելիքի փոխհարաբերության քննարկման կապակցությամբ։

Գիտության պատմության առումով զգալի հետաքրքրություն է ներկայացնում մարդու և կենդանիների միջև գոյություն ունեցող տարբերության պատճառների մասին բարթուղիմեոսյան բացատրությունը, նրա գաղափարը մարդու ուղղաձիգ դիրքի նշանակության և աշխատանքային գործունեության մասին։ Հեղինակը Բարթուղիմեոսի կոնցեպցիան ընդհանուր առմամբ գնահատելով իբրև մետաֆիզիկական, հակաէվոլյուցիոն, միաժամանակ նշում է, որ «նրա դատողությունների և գնահատումների մեջ չի կարելի չտեսնել հանճարեղ կռահումների հատիկներ» (էջ 53), որոնք վերցվել և յուրացվել են Գրիգոր Տաթևացու և Մաթևոս Ջուղայեցու կողմից։ Ողջ միջնադարյան փիլիսոփայության առանցքային պրոբլեմն է ունիվերսալիաների խնդիրը, որի մանրակրկիտ վերլուծությանն է նվիրված տրվյալ հետազոտության երրորդ գլուխը։ Այս գլխում տրվում է Տաթևի դպրոցի ներկայացուցիչների և Բարթուղիմեոս Բոլոնացու, Պետրոս Աբադոնացու կողմից ունիվերսալիաների պրոբլեմի լուծման համեմատական վերլուծությունը։ Հեղինակը բացահայտում է Բարթուղիմեոսի չափավոր-ռեալիստական կոնցեպցիայի էությունը, ցույց է տալիս, որ վերջինս այն հիմնավորելու համար դիմել է ոչ միայն Արիստոտելի, այլև Դավիթ Անհաղթի հեղինակությանը։ Ի հակադրություն Թովմա Աքվինացու լատին հետևորդների, հայ մտածողները կանգնած են եղել նոմինալիզմի դիրքերում. «Հենց միջնադարյան փիլիսոփայության համար այս առանցքային պրոբլեմում (Որոտնեցին և Տաթևացին—Կ. Մ.) ունեցան հակադիր դիրքորոշում և փիլիսոփայորեն հերքեցին Բարթուղիմեոսի և Պետրոսի կողմից քարոզվող, պապական կուրիայի կողմից պաշտոնապես պաշտպանվող թոմիզմը» (էջ 72)։

Դրան զուգահեռաբար Ս. Արևշատյանը նաև որոշակի ճշտումներ է մտցնում նոմինալիզմի և ռեալիզմի բովանդակության գնահատման մեջ։ Ճիշտ է նկատված, որ «չափավոր» նոմինալիստները «շատ ընդհանուր գծեր ունեին «չափավոր» ռեալիստների հետ, միայն այն հիմնական տարբերությամբ, որ նրանք շեշտված ձևով ընդգծում էին արիստոտելյան տրամաբանության և իմացաբանության մատերիալիստական մոմենտները» (էջ 71)։ Տաթևի դպրոցի նոմինալիստական կոնցեպցիայի աղբյուրը տեսնելով միջնադարյան հայ փիլիսոփայության էմպիրիկ-սենսուալիստական ուղղվածության մեջ՝ հեղինակը հատկապես ընդգծում է ևս մեկ ոչ պակաս կարևոր մոմենտ։ Խոսքը վերաբերում է այն բազմադարյան եկեղեցական-դավանաբանական սուր բանավեճերին, որոնք մղվում էին ազգային ինքնուրույն եկեղեցու գոյության արդարացման գաղափարի կողմնակիցների և ունիթորական շարժման գաղափարախոսների միջև։ Դրա համար էլ ունիվերսալիաների պրոբլեմի լուծումն ուներ ոչ միայն տեսական-իմացաբանական և տրամաբանական նշանակություն, այլև հաճախ ձեռք էր բերում պրակտիկ, քաղաքական-գաղափարախոսական հնչեղություն։

Գրախոսվող գիրքը առաջին լուրջ ուսումնասիրությունն է՝ նվիրված XIV դարում «Հայաստանում և նրա սահմանամերձ մարզերում ստեղծված կաթոլիկական հոգևոր-մշակութային կենտրոնների գործիչների» փիլիսոփայական կոնցեպցիաների վերլուծությանը (էջ 10)։ Նրա մեջ, փաստորեն, դրվում է պատմագիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող հարցի սիստեմատիկ ուսումնասիրության անկյունաքարերից մեկը։ Այն անշուշտ կնպաստի ոչ միայն հայ հոգևոր մշակույթի պատմության, արևմտյան միջնադարյան մշակույթի հետ նրա ունեցած կապերի լուսաբանմանը, այլև կօգնի արևմտաեվրոպական միջնադարյան փիլիսոփայության պատմության մշակման մեջ որոշակի ճշտումներ մտցնելուն։

Կ. Ա. ՄԻՐՈՒՄՅԱՆ